

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ
Ի. Վ. ՄԻՇՈՒՐԻՆԻ ՄԱՀՎԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ**

Հունիսի 9-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Ի. Վ. Միշուրինի մահվան 15-ամյակին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի ներածական խոսքից հետո «Ի. Վ. Միշուրինը բնության մեծ վերափոխիչ» թեմայով զեկուցում տվեց բիոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Բատիկյանը:

— Ղեկավարվելով դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքներով, — ասաց զեկուցողը, — Ի. Վ. Միշուրինը ստեղծեց նոր, իսկապես մատերիալիստական բիոլոգիական գիտություն, որը սոցիալիստական գյուղատնտեսությանն օգնում է մեր երկրում գյուղատնտեսության մթերքների առատություն ստեղծելու գործում: Մեծ է Միշուրինի մատուցած ծառայությունը: Նա անչափ ընդլայնեց մարդու իշխանությունը բնության վրա: Միշուրին — Լիսենկոյի ուսմունքը, որ սերտորեն կապված է աշխարհում ամենաառաջավոր սոցիալիստական գյուղատնտեսության պրակտիկայի հետ, անընդհատ զարգանալով դարձել է հսկայական նյութական ուժ, համաժողովրդական սեփականություն:

Այնուհետև լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մ. Թումանյանի զեկուցումը «Բույսերի տեսակագոյացման մի քանի հարցեր» թեմայով:

— Բնության մեծ վերափոխիչ Ի. Վ. Միշուրինի վիթխարի ծառայությունների շնորհիվ, — ասաց ընկ. Թումանյանը, — հնարավոր դարձավ ուսումնասիրել բույսերի տեսակագոյացման պրոցեսները՝ գյուղատնտեսական կուլտուրաների ավելի արժեքավոր, ավելի բերքատու տեսակներ ստանալու և դրանք կոլխոզային արտադրության մեջ արմատավորելու համար: Դա հանդիսանում է մեծագույն հաղթանակ բիոլոգիական գիտության մեջ:

Միայն Միշուրինի ուսմունքի և

նրա գործը շարունակող ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքի շնորհիվ, որոնք իրենց աշխատանքի հիմքում դրել են մարքսիստական մատերիալիստական փիլիսոփայությունը, հնարավոր դարձավ վերափոխել բնությունը մեր ցանկությունների համաձայն, հօգուտ աշխատավոր լայն մասսաների շահերի:

Լայնորեն կիրառելով կուլտուրական բույսերի ցանքի միշուրինյան մեթոդիկան շափազանց անսովոր ժամկետներում և դրանք աճեցնելով համապատասխան պայմաններում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բույսերի տեսակագոյացման լաբորատորիան կատարել է մի շարք կուլտուրաների ձևակազմության պրոցեսների հետազոտություն: Յորենից ստացվել է աշորա և պարզվել են դաշտամուշախոտային աշորայի ծագման պատճառները: Պինդ ցորենից ստացվել է փափուկ ցորենի «Պերսիկում» ցորենը վերածվել է պինդ ցորենի, որը պիտանի է ռեսպուբլիկայի լեռնային շրջանները փոխադրելու համար: Նրանից ստացվել են խոշոր հատիկներ ունեցող հսկայական հասկեր, որոնք աչքի են ընկնում իրենց բերքատվությամբ և վաղ հասունանալու ընդունակությամբ:

Բույսերի վերափոխումը կատարված է լաբորատորիայում ոչ միայն ցորենի, այլև եգիպտացորենի, գարու, բրնձի, արևածաղկի, քունջութի նկատմամբ: Այսպես, օրինակ, երկշարքանի գարուց ստացվել է վեցշարքանի գարի և ընդհակառակը: Այդպիսով միշուրինյան առաջավոր ագրոբիոլոգիայի հիման վրա ձեռք է բերվել բույսի մեկ տեսակի վերածումը մյուսին:

Մենք չպետք է հանգստանանք ձեռք բերածով, մեր խնդիրն է է՛լ ավելի զարգացնել Միշուրինի մեծ ուսմունքը, որպեսզի է՛լ ավելի բարձրացնենք սովետական գիտության դերը գյուղատնտեսության զարգացման ասպարեզում: